ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի N 608-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի <<Ձկնաբուծական մթերքների արտադրության ձեռնարկություններում վտանգի աղբյուրների վերլուծության և կրիտիկական կետերի հսկման՝ ՎԱՎԿԿՀ (HACCP) համակարգի ներդրման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին>> N 608-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) ուժը կորցրած ճանաչել 1-ին և 3-րդ կետերը

2) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<

2.	Ձկնաբուծական մթերքների արտադրության ոլորտում ՎԱՎԿԿՀ (HACCP) համակարգի ներդրման	մինչև 2012 թ. օգոստոսի 1-ը	ՀՀ ԳՆ-ի սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն ՀՀ ԳԱԱ-ի <<Էկոլոգոնոոսֆերային հետազոտությունների կենտրոն>> ՊՈԱԿ-ի սննդի շղթայի ռիսկերի գնահատման	1. Կիրականացվի ձկնաբուծական մթերքների արտադրության ոլորտում ՎԱՎԿԿՀ (HACCP) համակարգի ներդրման կարիքների մոնիթորինգ 2. Մոնիթորինգի

12_0894

>>.

	կարիքների մոնիթորինգի իրականացում		տեղեկատվավերլուծական կենտրոն (համաձայնությամբ)	արդյունքները կներկայացվեն ՀՀ գյուղատնտեսության նախարարին

3) 4-րդ կետի 3-րդ ենթակետում <<2011 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ>> բառերը փոխարինել <<2012 թվականի սեպտեմբերի 1-ին տասնօրյակ բառերով>>, իսկ 5-րդ ենթակետում <<Սույն ծրագրի 2-րդ կետի միջոցառման>> բառերը՝ <<Մոնիթորինգի>> բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: